ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/15

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոքաբեր՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Գ. Հուրոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման հարցում, Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 06.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևանի քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում 2020թ.-ի հունվարի 29-ին թիվ 3 արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել «Հուսալի կամար» ՍՊԸ-ի հայտը:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 06.02.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/19 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/19 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/15 համարի ծածկագիրը և 18.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 18.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.03.2020թ.-ին:

2. <u>«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն 06.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով

հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել՝

1. ԷՏԱԼՈՆ ԳԲՈՒՊ ՓԲԸ-ն առաջարկելով 3000000 /երեք միլիոն/ ինքնարժեք, 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ շահույթ, 1100000 /մեկ միլիոն մեկ հարյուր հազար/ ԱԱՀ, և ընդանուր գին 6600000 /վեց միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ ընդանուր գին:

2. Հուսալի կամար ՍՊԸ-ն առաջարկելով 4400000 /չորս միլիոն չորս հարյուր հագար/ ինքնարժեք, 220000 /երկու հարյուր քսան հազար/ շահույթ, և ընդանուր գին 4620000 /չորս միլիոն վեց հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ ընդանուր գին:

3. Սեյսմանախագիծ ՍՊԸ-ն առաջարկելով 5800000 /հինգ միլիոն ութ հարյուր հազար/ ինքնարժեք, 580000 /հինգ հարյուր ութսուն հազար/ շահույթ, և ընդանուր զին 6380000/ վեց միլիոն երեք հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ ընդանուր գին:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.1 և 5.2 ենթակետերով գնահատող հանձնաժողովը որոշել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներին ծանուցել /հրավիրել/ 24.01.2020 թվականին ժամը 11-00-ին գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

24.01.2020 թվականին ժամը 11-00-ին սկսվել են բանակցությունները՝ բանակցություններին մասնակցել են ԷՏԱԼՈՆ ԳԲՈՒՊ ՓԲԸ, Հուսալի կամար ՍՊԸ, Սեյսմանախագիծ ՍՊԸ:

Բանակցությունների արդյունքում ներկայացվել են նոր գնային առաջարկներ ԷՏԱԼՈՆ ԳԲՈՒՊ ՓԲԸ-ի, Հուսալի կամար ՍՊԸ-ի կողմից /ներկայացվել է սփորև աղյուսյակ թիվ 1-ով/:

Աղյուսակ թիվ 1

Բանակցությունների արդյունքում ձևավորված նոր գնային առաջարկներ

Հ/Հ	Մասնակցի անվանում	Մասնակիցների կողմից առաջարկված գներ առանց ԱԱՀ
1	ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ	3950000 /երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար/
2	Սեյսմսնախագիծ ՍՊԸ	6380000 /վեց միլիոն երեք հարյուր ութսուն հազար/
3	Հուսալի կամար ՍՊԸ	3900000 /երեք միլիոն ինը հարյուր հազար/

Որից հետո կազմվել է գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություն թիվ 3-ը, գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 3.1 ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Հուսալի կամար ՍՊԸ-ին: Ինչպես նաև նույն արձանագրության 4.1 ենթակետով գնահատող հանձնաժողովը որոշեց Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Հուսալի կամար ՍՊԸ-ին:

29.01.2020 թվականին պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

Գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք Հուսալի կամար ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին և որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից.

Գնային առաջարկ հայտով ներկայացրած՝

Չափաբաժնի համար	*Կազմակերպության անվանում*	*Ինքնարժեք /դրամներով և թվերով/*	*Շահույթ /դրամներով և թվերով/*	*ՍԱՀ** /դրամներով և թվերով/*	*Ընդհանուր գինը /դրամներով և թվերով/*
1	*2*	*3*	*4*	*5*	

1	«ԷՏԱԼՈՆ ԳԲՈՒՊ» ՓԲԸ	3000000/երեք միլիոն/	2500000/երկու միլիոն հինգ հարյուր հազար/	1100000 /մեկ միլիոն հարյուր հազար/	6600000/վեց միլիոն վեց հարյուր հազար/
1	Սեյսմանախագիծ ՍՊԸ	5800000/հինգ միլիոն ութ հարյուր հազար/	580000/հինգ հարյուր ութսուն հազար/		6380000/վեց միլիոն երեք հարյուր ութսուն
1	Հուսալի կամար ՍՊԸ	4400000/չորս միլիոն չորս հարյուր հազար/	220000/երկու հարյուր քսան հազար/		4620000/չորս միլիոն վեց հարյուր քսան

Գնային առաջարկ բանակցությունների արդյունքում

Հ/Հ	Մասնակցի անվանում	Մասնակիցների կողմից առաջարկված գներ առանց ԱԱՀ
1	«ԷՏԱԼՈՆ ԳԲՈՒՊ» ՓԲԸ	3950000 /երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար/
2	Սեյսմանախագիծ ՍՊԸ	6380000 /վեց միյիոն երեք հարյուր ութսուն հազար/
3	Հուսալի կամար ՍՊԸ	3900000 /երեք միլիոն ինը հարյուր հազար/

Սույնով արձանագրվում է որ Հուսալի կամար ՍՊԸ-ի կողմից ի սկզբանե հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 4400000 /չորս միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ, որը սակայն հետագայում մասնակցի կողմից նվազեցվել է 3900000 /երեք միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ գների շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքում ինչը սակայն գտնում եմ որ հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-կետի պահանջներին:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն գների նվազեցման միաժամանկյա բանակցությունների արդյունքում որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչում Հուսալի կամար ՍՊԸ 3900000 /երեք միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-րդ մասի 1-ին և 10-րդ ենթակետերի համաձայն հրավերը պետք է պարունակի.

հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ գինը ար տա մույթով ներկայացնելու դեպքում դրա փոխարժեքը.

նշում է այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքները, աշխատանքները և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի 5.1 և 5.2 կետերի՝ առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

5.2 - Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկաաեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ընդ որում՝ ա) մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Սակայն մրցույթին հայտ ներկայացրած Հուսալի կամար ՍՊԸ-ի գնային առաջարկի, իսկ այնուհետև գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների արդյուքում ներկայացված գնային առաջարկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, վերջիններիս կողմից գնային առաջարկով ներկայացրած անգամ արժեքը (ինքնարժեքը և կանխատեսվող շահույթի հանրագումարը) պակաս է, քան տվյալ աշխատանքի ինքնարժեքը, ինչը չի կարող ուղղակի գոյություն ունենալ:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասին 10-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և մրցույթի Հրավերի 5.1. կետի պահանջներով՝ պետք է առնվազն մերժի Հուսալի կամար ՍՊԸ կողմից գների նվազեցման միաժամանկյա բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկը: Հակառակ դեպքում կստացվի, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և մրցույթի Հրավերի 5.1. կետի պահանջների խախտում:

Անգամ «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը բանակցությունների վարման ժամանակ գնահատող հանձնաժոգովի տեղեկացրել է Հայաստանի Հանրապետության Գնումների մասին 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջի մասին, սակայն գնահատող հանձնաժողովը մերժել է մասնակցի բերված հիմնավորումը:

Գտնում ենք, որ առնվագն այս մասով նույնպես գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել խախտումներ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյսդ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարեյու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ խնդրել է՝

1. Պարտավորեցնել չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևանի քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում 2020թ.-ի հունվարի 29-ին թիվ 3 արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել «Հուսալի կամար» ՍՊԸ-ի հայտը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.02.2020թ.-ին գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ հնարավորություն տալով «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից

06.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն գրավոր դիրքորոշում չի հայտնել, սակայն ներկայանալով հրավիրված նիստին հայտնել է, որ բողոքով բարձրացված խնդրի վերաբերյալ հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, խնդրելով տալ պարզաբանում, թե արդյոք բանակցությունների ընթացքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները կարող են նվազեցվել միայն ներկայացված շահույթից, թե ոչ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պարզաբանմամբ հայտնե է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 52-րդ կետի 3-րդ մասի համաձայն, եթե պայմանագրի գինը կայուն է, ապա պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (ընտրված մասնակցի կամ պատվիրատուի) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Վերոնշյալով պայմանավորված՝ գների միաժամանակյա նվազեցման բանակցությունների ընթացքում գնահատող հանձնաժողովը թույլատրել է մասնակիցներին գների նվազեցում կատարել նաև ինքնարժեքից:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերում նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն, «Հուսալի կամար» ՍՊԸ-ն և «Սեյսմանախագիծ» ՍՊԸ-ն:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ	3 000 000	2 500 000	1 100 000	6 600 000

«Հուսալի կամար» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ	4 400 000	220 000		4 620 000

Հանձնաժողովի 21.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցներին որոշելու նպատակով անցկացնել գների նվազեցման բանակցություններ:

Հանձնաժողովի 24.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ միաժամանակյա բանակցություններին ներկա են գտնվել «Հուսալի կամար» ՍՊԸ-ի, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի և «Սեյսմանախագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները: Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Հուսալի կամար» ՍՊԸ-ն՝ առաջարկելով պայմանագիրն իրականացնել 3 900 000 ՀՀ դրամ գումարով, իսկ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն 4 740 000 ՀՀ դրամ գումարով:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Հուսալի կամար» ՍՊԸ-ին:

29.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

Հայտարարության համաձայն՝ «Հուսալի կամար» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 3 900 000 ՀՀ դրամ, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 3 950 000 ՀՀ դրամ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից 06.02.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային

առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերում նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն ներկայացնելով գնային առաջարկը և հայտնելով, որ ուսումնասիրել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ	3 000 000	2 500 000	1 100 000	6 600 000

«Հուսալի կամար» ՍՊԸ-ն ներկայացնելով գնային առաջարկը և հայտնելով, որ ուսումնասիրել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ	4 400 000	220 000		4 620 000

Հանձնաժողովի 24.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ միաժամանակյա բանակցություններին ներկա են գտնվել «Հուսալի կամար» ՍՊԸ-ի, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի և «Սեյսմանախագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները: Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Հուսալի կամար» ՍՊԸ-ն՝ առաջարկելով պայմանագիրն իրականացնել 3 900 000 ՀՀ դրամ գումարով, իսկ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն 4 740 000 ՀՀ դրամ գումարով:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Հուսալի կամար» ՍՊԸ-ին:

29.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ «Հուսալի կամար» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 3 900 000 ՀՀ դրամ, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 3 950 000 ՀՀ դրամ:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն ներկայացրած բողոքով Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևանի քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների

ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում 2020թ.-ի հունվարի 29-ին թիվ 3 արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը և պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել «Հուսալի կամար» ՍՊԸ-ի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հուսալի կամար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 4 400 000 ՀՀ դրամ, իսկ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի մոտ այն կազմել է 3 000 000 ՀՀ դրամ: Սակայն 24.01.2020թ.-ին տեղի ունեցած բանակցությունների արդյունքում «Հուսալի կամար» ՍՊԸ-ն իր ներկայացրած գնային առաջարկից նվազեցրել է ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում «Հուսալի կամար» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 3 900 000:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր մասնակցի հայտը՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցները գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունեին նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը պետք է գնահատեր որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժեր մասնակիցների ներկայացրած հայտերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը (վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու /փոփոխելու/ նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևանի քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում 2020թ.-ի հունվարի 29-ին թիվ 3 արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը և պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել «Հուսալի կամար» ՍՊԸ-ի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքի պահանջը չի ելնում Օրենքի ու Կարգի դրույթներից: Ներկայացված պահանջի շրջանակներում հայտերի վերագնահատում և դրա հիմքով հայտ ներկայացրած մասնակցի հայտը մերժելու գործընթաց նախատեսված չէ, իսկ Բողոքներ քննող անձը և Հանձնաժողովը որպես պետական մարմիններ ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Այլ կերպ ասած՝ Բողոքներ քննող անձի՝ Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով վերապահված լիազորությունները սահմանափակված են՝ Օրենքով կամ Կարգով Հանձնաժողովին ու Պատվիրատուին վերապահված լիազորությունների շրջանակով, որոնց վերլուծությամբ, հարկ եմ համարում փաստել, որ հայտերի վերագնահատման և դրա հիմքով հայտ ներկայացրած մասնակցի հայտը մերժելու իրավասությամբ վերջիններս օժտված չեն:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ բողոքով ներկայացված և առկա փաստական հանգամանքները հաստատված ու ապացուցված համարելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված պահանջի բավարարմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից 06.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/15 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ